

## ԿԱՐԾԻՔ

**««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ  
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,  
«ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,  
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Նախագծերով սահմանված մարդու (հանրության) առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների՝ վնասակար ազդեցության նվազեցման, դրանց կանխարգելման, բացառման, ինչպես նաև վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխման ու վերացման նպատակով կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների սահմանում և դրանց իրականացումը հանգեցնում է մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման (ազատ տեղաշարժվելու, հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու, անձնական տվյալների պաշտպանության և այլ իրավունքները):

Հարկ է ընդգծել, որ թեև մեկուսացման, ինքնամեկուսացման, հավաքների ազատության, տնտեսական գործունեության արգելքի կամ մարդու իրավունքներին և ազատություններին միջամտություն ենթադրող այլ միջոցառումների իրավական հիմքերը սահմանված են, այնուամենայնիվ, այստեղ չափազանց կարևոր է, որ այդ բոլոր սահմանափակումները գործնականում լինեն խիստ համաչափ հետապնդվող նպատակին: Բացի այդ, իրավունքների և ազատությունների սահմանափակում

առաջացնող միջամտությունների շարունակականությունն ավելի է մեծացնում պետության իրավական բեռը՝ երաշխավորելու սահմանափակող միջոցառումների հիմնավորվածությունն ու համաչափությունը:

Երկրում ստեղծված վիճակից ելնելով և հաշվի առնելով, որ արտակարգ դրության փոխարեն նախատեսվում է սահմանել կարանտինի իրավական ռեժիմ՝ իր բոլոր իրավական հետևանքներով և անձանց համար որոշակի սահմանափակումներով՝ կարևոր է ընդգծել, որ պետությունը պետք է իրավակիրառող տարբեր իրավասու մարմինների համար իրականացնի կարողությունների զարգացմանն ուղղված գործողություններ, վերապատրաստումների կամ այլ գործիքների միջոցով ապահովի վերջիններիս կողմից պատշաճ իրավակիրառումը, իրավունքների նկատմամբ սահմանափակման ճիշտ չափանիշների իմացությունը և կիրառությունը՝ առաջին հերթին ոչ թե հակադրելով մարդու իրավունքներն ու ազատությունները հանրային շահին, այլ ապահովելով դրանց համալիր պաշտպանությունն ու հավասարակշռումը:

Հարկ է նաև նկատի ունենալ, որ նախագծերով ներդրվող սահմանափակումներն իրենց ողջ համակցության մեջ կարող են անձի իրավական կարգավիճակի վրա ունենալ նույն հետևանքներն ու ազդեցությունները, ինչը որ արտակարգ դրություն պայմաններում: Ստացվում է, որ Նախագծի ընդունմամբ և դրանով նախատեսվող կարգավորումների կյանքի կոչմամբ՝ ամիսներ շարունակ սահմանափակումները շարունակաբար կարող են նույնությամբ պահպանվել արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանվելու պարագայում, այնպես, ինչպես արտակարգ դրության պայմաններում է: Հետևաբար չափազանց կարևոր է, որ ցանկացած դրույթ մեկնաբանվի և կիրառվի մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր սկզբունքներին խիստ համահունչ:

Այս դիտարկումը փաստվում է նաև արտակարգ դրության հայտարարման պահից ի վեր՝ այս ամիսների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման արդյունքներով արձանագրված բազմաթիվ խնդիրներով: Այդ խնդիրները պետք է պատշաճ ուշադրության առարկա դառնան սույն նախագծերի կիրառումն ապահովող մարմինների համար՝ դրանց շարունակականությունը կանխելու նպատակով:

Հետևաբար, դիտարկելով Նախագծերի կարգավորումների հետևանքով հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը և դրանց ներգործության ծավալը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախատեսվող օրենսդրական կարգավորումների կիրառման նկատմամբ իրականացնելու է մշտադիտարկում՝ հաշվի առնելով նաև արտակարգ դրության պայմաններում այդ բոլոր սահմանափակումների կիրառմանն առնչվող արձանագրված մի շարք համակարգային խնդիրները:

Սկզբունքային այս դիտարկումներից զատ՝ ստորև ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի նկատառումները Նախագծերի առանձին դրույթների առնչությամբ: Այսպես,

1.«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3 -րդ հոդվածով լրացվող «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նոր 20.1-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է մարդու (հանրության) առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների՝ վնասակար ազդեցության նվազեցման, դրանց կանխարգելման, բացառման, ինչպես նաև վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխման ու վերացման

նպատակով, սանիտարական կանոններին համապատասխան սույն օրենքի 6-10-րդ, 24-րդ հոդվածներով և այլ օրենքներով սահմանված կարգով իրականացնում են կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ:

Սակայն լրացվող նոր 20.1-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-10-րդ, 24-րդ հոդվածների համադիր ուսումնասիրությամբ՝ պետք է նշել, որ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող նոր 20.1-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանելով կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները, չի նախատեսել դրանց իրականացնող սուբյեկտին: Բացի այդ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-10-րդ հոդվածները ամրագրում են տարբեր սուբյեկտների (ՀՀ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի, քաղաքացիների) լիազորությունները կամ իրավունքներն ու պարտականությունները սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում, իսկ 24-րդ հոդվածը սահմանում է համաճարակաբանական դիտարկումը, հիվանդությունների կանխարգելումը, պետական հիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողությունը: Այսինքն՝ ո՛չ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 21.1-րդ հոդվածը, ո՛չ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-10-րդ, 24-րդ հոդվածները չեն ներառում, թե որ մարմինը կամ ով պետք է իրականացնի սահմանված կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները:

Ուստի, առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 21.1-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրել նաև կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները իրականացնող սուբյեկտները:

2. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող Օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, ի թիվս այլ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների, սահմանում է բժշկական փաստաթղթերի, ներառյալ՝ բժշկական զննություն կամ լաբորատոր *որևէ հետազոտություն* հավաստող կամ կանխարգելիչ այլ միջոցառումներ հավաստող փաստաթղթերի ուսումնասիրությունը: «Որևէ հետազոտություն» բառակապակցության սահմանման պարագայում կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումը ստացվում է չափազանց լայն և «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նպատակին ու կարգավորման առարկային ոչ համահունչ:

Ինդիրն այն է, որ լաբորատոր որևէ հետազոտություն հավաստող փաստաթղթի ներկայացումը ու դրա ուսումնասիրությունը «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի նպատակից դուրս է, եթե, օրինակ, ներկայացվի վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխման ու վերացման նպատակի չհամապատասխանող հետազոտությունը հաստատող փաստաթուղթ:

Ուստի, առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 21.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «որևէ հետազոտության» բառակապակցությունը հստակեցնել՝ հետազոտության տեսակը

դարձնելով համահունչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխման ու վերացման նպատակին:

3. ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացնել նոր՝ 20.2-րդ հոդված, որի 7-րդ մասի համաձայն՝ կարանտին սահմանվելու դեպքում կիրառվող անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

Կարանտին սահմանելու մասին որոշման ընդունումից հետո կիրառվող անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման կարգը տևական ժամանակ սահմանված չլինելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով առաջարկում ենք սահմանել լիազոր մարմնի ղեկավարի կողմից կարանտին սահմանվելու դեպքում կիրառվող անհատական պաշտպանության միջոցների ցանկը և դրանց կիրառման կարգը սահմանելու առավելագույն ժամկետ:

4. ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքում լրացնել նոր՝ «Կարանտինը սահմանելը» վերտառությամբ 20.2-րդ հոդված, որի 3-րդ մասով սահմանվում է այն մարմինների շրջանակը, որոնք լիազոր մարմնի առաջարկությամբ կայացնում են կարանտին սահմանելու մասին որոշում: Լրացվող 20.9՝ «Կարանտինի գործողության ժամկետը, երկարաձգումը կարանտինի դադարումը» վերտառությամբ հոդվածում սահմանվում է, որ կարանտինը դադարում է կարանտին սահմանելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու միջոցով: Վերջինիս վերաբերյալ, սակայն, Նախագծով չի սահմանվել ընթացակարգ, ուստի բաց է մնում այն հարցը, թե արդյոք որոշումն ընդունած

մարմինը լիազոր մարմնի առաջարկությամբ է կայացնելու կարանտին սահմանելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում, թե՛ նշվածը տեղի է ունենալու այլ ընթացակարգով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերանայել նշված կարգավորումը՝ նախատեսելով կարանտինը դադարում է կարանտին սահմանելու մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու ընթացակարգ:

5. Նախագծերով առաջարկվող կարգավորումների, ինչպես նաև գործող օրենքների ուսումնասիրությամբ կարող ենք փաստել, որ օրենսդրորեն կանոնակարգված չեն արտակարգ իրավիճակի վերաբերյալ մի շարք հիմնական գործընթացներ: Մասնավորապես, օրենսդրությամբ սահմանված չեն այն դեպքերը, որոշակի իրադրության պատճառով առաջացած հետևանքների ծանրության աստիճանը կամ հանրապետությունում և դրա առանձին հատվածներում առկա այն իրավիճակը, որոնց պարագայում կարող է կամ պետք է սահմանվի արտակարգ իրավիճակի ռեժիմ: Ավելին, բաց է այն հարցը, թե պետական որ մարմինը և ինչ ժամկետներում ու կարգով է իրավասու հայտարարել արտակարգ իրավիճակ: Այլ կերպ ասած՝ արտակարգ իրավիճակ հայտարարելու որևէ իրավական հիմք և չափանիշներ համապատասխան օրենքներով և ներկայացված նախագծերով սահմանված չեն:

Այն պարագայում, երբ ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի կարգավորումներով սահմանվել է կարանտին սահմանելու մասին որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինների շրջանակը, ապա արտակարգ իրավիճակի պարագայում, նման կարգավորումն առհասարակ բացակայում է: Ըստ նախագծի կարգավորումների, ստացվում է, որ հայտարարելով կարանտին, օրենքի ուժով առաջանալու է արտակարգ իրավիճակ, քանզի ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ վարակիչ

հիվանդությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներքերման (ներթափանցման), դրանց ծագման ու տարածման վտանգի, բռնկումների, համաճարակների առաջացման, ինչպես նաև դրանց հետևանքով արտակարգ իրավիճակ առաջանալու դեպքերում կարող է սահմանվել կարանտին, իսկ ««Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով արտակարգ իրավիճակի հիմքը համաճարակով պայմանավորված կարանտինի առկայությունն է:

Այսինքն՝ ըստ վերոգրյալի՝ կարանտինի սահմանումը ինքնին հանգեցնելու է արտակարգ իրավիճակի առկայությանը, սակայն, վերևում նշված բացերի արդյունքում խոսքը ոչ թե «արտակարգ իրավիճակ» իրավական ռեժիմի, այլ «արտակարգ իրավիճակ» երևույթի մասին է: Ստացվում է, որ կարանտին հայտարարելու պարագայում, այդ որոշումն ընդունած մարմինը հնարավորություն է ունենալու կայացնել ոչ միայն ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված սահմանափակման միջոցները, այլ ««Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանված արտակարգ իրավիճակի հիմք հանդիսացող համաճարակով պայմանավորված կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցառումները, որոնց թվում են, օրինակ՝ հավաքների, գործադուլների կամ հանրային միջոցառումներ կազմակերպելու անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումները և այլն:

Վերոգրյալի տառացի մեկնաբանմամբ ստացվում է, որ կարանտին հայտարարելու հիմքն ամեն դեպքում արտակարգ իրավիճակի առկայությունն է: Սակայն, հիմնավորված չէ, թե նման պարագայում ինչո՞ւ է կարանտինի ռեժիմի առկայության դեպքում սահմանվել ավելի քիչ սահմանափակման միջոցներ, քան նույն կարանտինի համար հիմք հանդիսացող արտակարգ իրավիճակի առկայության դեպքում: Այս անորոշ իրավիճակի պատճառը, ինչպես նշվեց, արտակարգ իրավիճակի որպես իրավական ռեժիմի



բացակայությունն է, քանզի ներկա և նախագծով ներկայացված կարգավորումների պարագայում վերջինս հանդես է գալիս, որպես երևույթ: Արդյունքում՝ բացակայում է կարանտինի ռեժիմի և արտակարգ իրավիճակի ռեժիմի հստակ տարանջատումը, ինչը հանգեցնում է այդ երկուսի նույնացմանը: Ավելին, կարանտին սահմանելու մասին որոշումը հանգեցնում է արտակարգ իրավիճակի և, ըստ այդմ, նախագծով ներկայացված առավել լայն՝ սահմանափակող միջոցառումների իրականացման:

Հարկ է նշել, որ դեռևս 2018 թվականին Արտակարգ իրավիճակների նախարարությունը մշակել և շրջանառել է «Արտակարգ իրավիճակների կառավարման մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ արտակարգ իրավիճակների ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման նպատակով: Վերջինով նախատեսվում էր լուծել այն բացը, որ երկրում աղետի գրանցման դեպքում կամ գտնվելով դեպքի, պատահարի վայրում կամ ստանալով տեղեկատվություն վերջիններիս սպառնալիքի դեպքում՝ Կառավարության, պետական կառավարման համապատասխան մարմինների, մարզպետների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների համար արտակարգ իրավիճակ հայտարարելու որևէ իրավական հիմք (լիազորություն, պարտավորություն), չափանիշ կամ չափորոշիչ օրենքով սահմանված չէ: Նշված նախագիծը դեռևս չի ընդունվել:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ներկայացված նկատառումների լույսի ներքո ապահովել նախագծի կարգավորումների լիարժեքությունը և միասնականությունը:

6. ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի առաջարկվող՝ կարանտին սահմանվելու դեպքում կիրառվող սահմանափակող միջոցառումներից է ինքնամեկուսացումը: Ի տարբերություն մեկուսացման, երբ մեկուսացման վայրում անձին, ի թիվս այլնի, ապահովվելու են սննդով, ապա ինքնամեկուսացման պարագայում նման կարգավորում բացակայում է: Նոր կորոնավիրուսային համաճարակով պայմանավորած բազմաթիվ ահազանգեր են

<sup>1</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/1407> հղմամբ, հասանելի է 26.08.2020 թվականի դրությամբ:

ստացվել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, առ այն, որ անձինք ինքնամեկուսացման մեջ գտնվելու պատճառով չեն կարողանում այցելել խանութ կամ տեխնիկական պատճառներից ելնելով չեն կարողանում պատվիրել սննդի առաքում: Առավել մտահոգիչ է նաև այն հարցը, որ անձն ինքնամեկուսացման պատճառով չաշխատելու արդյունքում չի կարողանում հոգալ իր և ընտանիքի անդամների նվազագույն կարիքները:

Համեմատական համադրության ենթարկելով ինքնամեկուսացման և մեկուսացման կարգավորումները, կարող ենք փաստել, որ առաջինի դեպքում տեղի է ունենում առանձնացում տվյալ անձի մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու, իսկ երկրորդի պարագայում՝ լիազոր մարմնի որոշմամբ նախատեսված վայրում՝ որոշակի այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու նպատակով:

Ստացվում է, որ երկուսի պարագայում էլ անձը զրկված է ազատ տեղաշարժվելու իրավունքից՝ դրանից բխող հետևանքներով:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է քննարկման առարկա դարձնել ինքնամեկուսացման մեջ գտնվող անձանց սննդով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելու հարցը:

7. ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և ««Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի համաձայն՝ կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցառումների կիրառումը չի կարող խոչընդոտել Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի, դատարանների և Մարդու իրավունքների պաշտպանի բնականոն գործունեությունը:

Անհրաժեշտ է «Մարդու իրավունքների պաշտպանի» բառերից հետո ավելացնել «և նրա իրավասու ներկայացուցչի» բառերը՝ հաշվի առնելով, որ նույն ձևակերպումն է

տրված ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 15-րդ կետով:

8. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածով լրացվող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոդվածի շրջանակներում ինքնամեկուսացում կամ մեկուսացում կիրառելու համար անձանց էլեկտրոնային եղանակով հայտնաբերման և ինքնամեկուսացման կամ մեկուսացման նկատմամբ էլեկտրոնային հսկողության իրականացման նպատակով կարանտին սահմանելու մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետությունում գործող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի օպերատորները (այսուհետ՝ օպերատոր) յուրաքանչյուրն իր հաճախորդների մասով պարտավոր են կարանտին սահմանելու մասին որոշմամբ սահմանված ձևով և կարգով ու այդ որոշմամբ նշված պետական մարմիններին և պետության կողմից հիմնադրված իրավաբանական անձանց (այսուհետ՝ տվյալներ մշակողներ) փոխանցել տվյալներ: Ավելին, ըստ նույն հոդվածի 11-րդ մասի՝ ինքնամեկուսացման հրահանգ տալու հետ միաժամանակ կոնտակտավորը տեղեկացվում է, որ ինքնամեկուսացման ռեժիմի իրականացումն ապահովելու նկատմամբ հսկողությունն իրականացվելու է էլեկտրոնային եղանակով՝ հեռախոսի օգտագործմամբ կիրառվող հատուկ ծրագրային ապահովման միջոցով և հրահանգավորվում է լինել հասանելի՝ հեռախոսազանգերին և հաղորդագրություններին պատասխանելու համար՝ նախազգուշացնելով հատուկ ծրագրային ապահովումը կիրառելուց հրաժարվելու հետևանքների մասին:

Կարևոր է ընդգծել, որ անձնական տվյալների պաշտպանությունը ոչ մի դեպքում չի կարող խոչընդոտ հանդիսանալ կյանքի և առողջության պահպանման համար, և որ

կիրառվող մեխանիզմները և սկզբունքները պետք է հավասարակշռեն վտանգվող արժեքները:

Կարևորելով վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխման ու վերացման նպատակով իրականացվող կարանտինային սահմանափակումների իրականացումը՝ հարկ է ընդգծել, որ անձնական տվյալների փոխանցման, ավելին ինքնամեկուսացման ռեժիմի իրականացումն ապահովելու նկատմամբ էլեկտրոնային եղանակով հսկողություն իրականացման համար ծրագրային ապահովումը կիրառելուց հրաժարվելու համար հետևանքների նախատեսումը կարող է խնդրահարույց լինել:

Անհատական տվյալների լայնածավալ մշակումը կարող է իրականացվել միայն այն ժամանակ, երբ հիմք ընդունելով գիտական ապացույցները, համաճարակի հանրային առողջության պոտենցիալ օգուտների այդպիսի թվային դիտարկումը (օրինակ՝ կոնտակտների հետևումը) գերազանցում է այլընտրանքային լուծումների օգուտները, որոնք կլինեն պակաս միջամտող<sup>2</sup>:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածով լրացվող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17.5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը նախատեսում է ստուգված (թեսթավորված), վարակակիր, հիվանդության ախտանիշներ ունեցող, հիվանդացած, բուժվող և նրանց հետ շփում ունեցած (կոնտակտավոր), ինչպես նաև ինքնամեկուսացված կամ մեկուսացված անձանց կողմից օգտագործվող ծառայության վայրը պարզելու համար անհրաժեշտ տվյալների (հաճախորդի տեղորոշում), այդ թվում՝ իրական ժամանակի ռեժիմում, փոխանցում:

Անդրադառնալով ինքնամեկուսացում կամ մեկուսացում կիրառելու համար անձանց էլեկտրոնային եղանակով հայտնաբերման և ինքնամեկուսացման կամ մեկուսացման նկատմամբ էլեկտրոնային հսկողության իրականացման նպատակով փոխանցվող տվյալներին (այդ թվում՝ իրական ժամանակի ռեժիմում) հարկ է ընդգծել, որ թեպետև վիրուսի տարածման վերաբերյալ իրական ժամանակում ստացվող տեղեկատվությունը

---

<sup>2</sup> <https://rm.coe.int/covid19-joint-statement/16809e09f4>

կարող է մեծ դեր ունենալ դրա կանխման համար, սակայն պետք է շեշտել, որ մշտապես նվազագույն միջամտություն ունեցող լուծումները պետք է նախընտրելի լինեն<sup>3</sup> համաձայն Եվրոպայի խորհրդի COVID-19 համաճարակի համատեքստում տվյալների պաշտպանության իրավունքի վերաբերյալ համատեղ հայտարարության: Բացի այդ, տվյալների փախանցման, մշակման նման աշխատանքների ներդրման պարագայում դրանք պետք է լինեն սահմանափակ ժամանակահատվածի համար և բացառապես կամավորության սկզբունքով<sup>4</sup> և պարտադիր չլինեն<sup>5</sup>:

Այդ հատուկ ծրագրերը պետք է ներառեն երաշխիքներ ռիսկերի կանխման կամ նվազագույնի հասցնելու համար, օրինակ՝ ապահովել, որ անհատների գտնվելու վայրի տվյալները չեն օգտագործվում, որ հնարավոր չէ ուղղակի նույնականացում կամ վերանույնականացումը արգելված է<sup>6</sup>:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ պետք է ընդգծել, որ մարդու անձնական տվյալների պաշտպանության երաշխավորումը պետք է դրված լինի բարձր հիմքերի վրա: Նախագծով պետք է երաշխավորվի դրա լիարժեք պաշտպանությունը, և այս պարագայում առավել խնդրահարույց է հատուկ ծրագրային ապահովումը կիրառելուց հրաժարվելու առաջացնող հետևանքները: Նախ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածով լրացվող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17.5-րդ հոդվածի 11-րդ մասով ամրագրված դրույթից պարզ չէ, թե ինչ հետևանքներ է առաջացնելու ծրագրային ապահովումը կիրառելուց հրաժարվելը, և երկրորդ, առավել խնդրահարույց է առհասարակ որևէ հետևանքների նախատեսումը:

<sup>3</sup> <https://rm.coe.int/covid19-joint-statement/16809e09f4>

<sup>4</sup> [https://www.coe.int/en/web/belgrade/-/covid-19-tracing-apps-side-effects-on-personal-data-protection-should-be-avoided#63455705\\_17320545\\_True](https://www.coe.int/en/web/belgrade/-/covid-19-tracing-apps-side-effects-on-personal-data-protection-should-be-avoided#63455705_17320545_True)

<sup>5</sup> [https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2020-0054\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2020-0054_EN.pdf)

<sup>6</sup> [https://www.coe.int/en/web/belgrade/-/covid-19-tracing-apps-side-effects-on-personal-data-protection-should-be-avoided#63455705\\_17320545\\_True](https://www.coe.int/en/web/belgrade/-/covid-19-tracing-apps-side-effects-on-personal-data-protection-should-be-avoided#63455705_17320545_True)

Անձին հատուկ ծրագրով առանց համաձայնության նման հետևումը, ինչպես նաև տվյալների փոխանակումը իրավապահների և ազգային անվտանգության ծառայությունների հետ մեծացնում են վտանգները, որ կարող են տվյալները մշակող իրավասու մարմինները չարաշահել իրենց լիազորությունները և օգտագործել տվյալները ապօրինի վերահսկողության, իրավապահ մարմինների կամ թիրախային նպատակների համար<sup>7</sup>: Տվյալների մշակման երաշխիքների նախատեսման վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման հատուկ ծրագրերի ներդրման համար նույնիսկ օրենսդրորեն կարգավորումների նախատեսման պարագայում հստակ կան չափանիշներ, թե որ դեպքում դրանք կարող են կիրառվել և ընդհանուր առմամբ կարևորություն է տրվել համաձայնության առկայությանը: Կարևոր է, որ նման ծրագր ներդրում լինի օրենսդրական հենքի վրա, սակայն այդ պարագայում նույնպես պետք է կամային լինի<sup>8</sup>:

Լրամշակված նախագծով սահմանված այս կարգավորման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.9-րդ հոդվածի կարգավորումները, դրանց նման կերպ սահմանումը մի շարք հարցեր են առաջացնում: Էլեկտրոնային հատուկ ծրակրերի կամ էլեկտրոնային այլ եղանակով հսկողության իրկանացման վերաբերյալ կարգավորումների նախագծից հանելն արդյո՞ք ենթադրում է անձնկան տվյալների պաշտպանության նման խնդրահարույց միջամտությունից հրաժարում, թե այն կարգավորում է ստանալու այլ նորմատիվ իրավական ակտով: Նման մտահոգությունը առաջանում է այն դիտարկմամբ, որ ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ անձի նկատմամբ ինքնամեկուսացումը կիրառվում է՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում Կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Արդյո՞ք ենթաօրենսդրական մակարդակում ինքնամեկուսացման կիրառման կարգը սահմանումը կարող է հետագայում ներառել նաև դրա ապահովելու նպատակով անձանց տվյալների փոխանցման խնդրահարույց էլեկտրոնային համակարգի ներդնում:

<sup>7</sup> <https://privacyinternational.org/long-read/3747/israels-coronavirus-surveillance-example-others-what-not-do>

<sup>8</sup> <https://academic.oup.com/jlb/article/7/1/Isaa034/5848138>

Բացի այդ, լրամշակված նախագծին կից ներկայացված հիմնավորումում ևս այդ հարցերին անդրադարձ չի կատարվել, թե էլեկտրոնային եղանակով հսկողության իրականացումը նախագծից հանելը և այն ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.7-րդ հոդվածի անորոշ կարգավորումներով փոխարինելն ինչ նպատակ է ենթադրում և ինչ անդյունքներ է ակնկալում:

Հաշվի առնելով վերագրյալը, առաջարկում ենք ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծային լուծումները և դրանցով հետապնդվող նպատակը առավել հստակեցնել՝ ապահովելով անձնական տվյալների պաշտպանության երաշխավորումը:

9. ««Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 20.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարանտինը սահմանվում է *մինչև վեց ամիս ժամկետով*: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում կարանտին սահմանելու հիմքերը չվերանալու դեպքում այն կարող է *երկարաձգվել մինչև 6 ամիս ժամկետով՝ պահպանելով կարանտին սահմանելու սույն օրենքով սահմանված կարգը*:

Նախագծերի նախորդ խմբագրությամբ տարբերակում սահմանված էր 2 ամիս ժամկետ: Կարանտինային սահմանափակումները միջամտում են մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին՝ հաշվի առնելով նաև դրանց շարունակականության հանգամանքը: Մինչդեռ նախագծին կից ներկայացված հիմնավորումները ևս չեն անդրադարձել ժամկետի փոփոխության հարցին և նպատակին, թե ինչու 2 ամիս ժամկետը փոխարինվում է 6 ամիս ժամկետով:

Հաշվի առնելով կարատինի ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը և դրանց իրականացման միջամտությունը՝ առաջարկում ենք

քննարկել կարատինի ժամկետի սահմանման հարցը, ինչպես նաև պատշաճ հիմնավորել սահմանված ժամկետի նախատեսումը:

10. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածով լրացվող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17.5-րդ հոդվածի 9-ին մասի համաձայն՝ հոդվածով սահմանված նպատակներից չբխող այլ նպատակներով կամ սահմանված կարգի խախտմամբ տվյալները մշակելը, այդ թվում՝ պահելը, օգտագործելը կամ տարածելը, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունը և ձայնային հաղորդագրությունները փոխանցելը, ստանալը, ձայնագրելը կամ դրանց բովանդակությունն այլ ձևով ամրագրելը, սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով տվյալները չոչնչացնելը առաջացնում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխման ու վերացման նպատակով իրականացվող միջոցառումների իրականացմամբ՝ սակայն պետք է հատուկ ընդգծել, որ անձնական տվյալների փոխանցման, տվյալների մշակման գործընթացներում անձնական տվյալների պաշտպանության երաշխավորմանն ուղղված նորմերի ամրագրումը չափազանց կարևոր է:

Այդ նպատակով ամրագրված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածով լրացվող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17.5-րդ հոդվածի 9-ին մասով ամրագրված պատասխանատվությունը կարևոր է, սակայն պարզ չէ, թե տվյալները չոչնչացնելը ինչ պատասխանատվություն է առաջացնելու:



Անձնական տվյալների պաշտպանության երաշխավորման նպատակով առաջարկում ենք «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդվածով լրացվող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17.5-րդ հոդվածի 9-ին մասը խմբագրել՝ հստակեցնելով դրանով ամրագրված տվյալները չոչնչացնելու համար հանրային իրավական պատասխանատվության տեսակը:

11. ««Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածով լրացվող «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 17.5-րդ հոդվածի 9-րդ և 18-ր մասերը բացառապես կրկնում են նույն դրույթները: Ուստի, առաջարկում ենք խմբագրել՝ բացառելով կրկնությունները:

12. ««Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածում նախատեսվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացնել նոր 4.1-ին գլուխ, որի 17.7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի որոշմամբ կարող է ժամանակավորապես արգելվել կազմակերպության գործունեությունը (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում ֆիզիկական անձանց կողմից իրականացվող վաճառքը) այն վայրում (հասցեում), որտեղ տեղի են ունեցել կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող միջոցառումների և սահմանափակումների խախտումներ: Կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես արգելելը չի

բացառում կազմակերպության նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը:

Ստացվում է, որ վարչարարություն իրականացնող մարմինը, տնտեսվարողի՝ սահմանափակումներից մեկի խախտման դեպքում կարող է ժամանակավորապես արգելել վերջինիս գործունեությունը, և այդ նույն խախտման համար օրենքը հնարավորություն է տալիս վարչարարություն իրականացնողին կիրառել նաև վարչական պատասխանատվության միջոց, արդյունքում՝ հանգեցնելով կրկնակի պատասխանատվության:

Նույն արարքի համար կրկին դատվելու արգելքը՝ որպես սկզբունք, ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային կից 7-րդ արձանագրության 4-րդ հոդված, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետ և այլն):

Նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության բացառման իրավական սկզբունքին անդրադարձել է Սահմանադրական դատարանն իր 2014 թվականի փետրվարի 18-ի թիվ ՍԴՈ-1139 որոշմամբ, որի համաձայն՝ հարկային, ինչպես նաև վարչաիրավական հարաբերություններում իրավասու սուբյեկտները, ելնելով այդ հարաբերությունների բովանդակությունից ու առանձնահատկություններից, անհրաժեշտաբար (օբյեկտիվորեն) կարող են հանդես գալ իրավական մի քանի կարգավիճակներով՝ միաժամանակ հանդես գալով թե՛ որպես հարկային և թե՛ վարչաիրավական հարաբերության սուբյեկտներ, և որոնց նկատմամբ միաժամանակ հարկային և վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է մեկնաբանվել որպես միևնույն արարքի համար իրավական կրկնակի պատասխանատվություն:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը թեև անդրադարձել է հարկային իրավահարաբերություններում կրկնակի պատասխանատվության ենթարկելու դեպքին, այնուամենայնիվ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը վերաբերելի է նաև քննարկվող խնդրին այն առումով, որ կազմակերպության գործունեությունը

ժամանակավորապես արգելելն ինքնին պատասխանատվության միջոց է արդեն: Ուստի, կազմակերպության գործունեությունը ժամանակավորապես արգելելու հետ միաժամանակ կազմակերպության նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը կարող է խնդրահարույց լինել նույն արարքի համար կրկնակի պատասխանատվության բացառման սկզբունքի պահպանման տեսանկյունից:

13. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը լրացնել նոր 182.4-րդ հոդվածով, որի 2-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսված կարանտինի ընթացքում անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի կամ *տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու* համար, իսկ նույն հոդվածի 7-րդ մասով վարչական պատասխանատվություն է նախատեսվել կարանտինի ընթացքում *տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու, ինչպես նաև դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու* համար:

Ակնհայտ է, որ առաջարկվող 182.4-րդ հոդվածի թե՛ 2-րդ և թե՛ 7-րդ մասերով պատասխանատվություն է նախատեսվում բացառապես նույն արարքի համար, որպիսի պայմաններում արարքի որակման խնդիր է առաջանալու: Այսինքն, նման կարգավորման պայմաններում տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակումները խախտելու կամ դրանց զննման իրականացմանը խոչընդոտելու դեպքերում հարց է առաջանալու, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածի որ մասով է անձը ենթակա լինելու պատասխանատվության՝ նկատի ունենալով նաև, որ որպես վարչական պատասխանատվություն նախատեսված տուգանքի չափերը տարբեր են (համապատասխանաբար 10.000 ՀՀ դրամ և 50.000 ՀՀ դրամ):

Ուստի, նախագծի հետագա լուծումներում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ:

14. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը լրացնել նոր 182.4-րդ հոդվածով, որի 6-րդ մասը վարչական պատասխանատվություն է նախատեսում կարանտինի ընթացքում հանրային միջոցառումներ կազմակերպելու, անցկացնելու կամ դրանց մասնակցելու սահմանափակումները և արգելքները խախտելու համար:

Կարծում ենք, որ կարանտինի ընթացքում հանրային միջոցառումներին մասնակցելու սահմանափակումները խախտելու և միաժամանակ այդ միջոցառումները կազմակերպելու և անցկացնելու սահմանափակումները և արգելքները խախտելու համար պատասխանատվության նույն միջոցը սահմանելիս որոշակի վերապահում պետք է անել հանրային միջոցառումներին մասնակիցների համար: Նշվածը բխում է գործնականում հանդիպող այն հնարավոր իրավիճակներից, երբ հանրային միջոցառման հրավիրված անձն, օրինակ, ի սկզբանե համաձայնում է մասնակցել հանրային այնպիսի միջոցառման, որը նախատեսվում է անցկացվել առանց սահմանված սահմանափակումների խախտման: Մինչդեռ, միջոցառման վայր հասնելիս կամ միջոցառման ընթացքում պարզվում է, որ միջոցառումն անցկացվել է սահմանափակումների խախտմամբ, որի մասին միջոցառման մասնակիցը չգիտեր և ողջամտորեն չէր կարող իմանալ:

Ավելին, եթե որպես սահմանափակման օրինակ դիտարկենք միջոցառումների մասնակիցների քանակը, ապա պետք է հաշվի առնել, որ մասնակիցը միջոցառման ընդհանուր մասնակիցների քանակը պարզելու պարտավորություն չի կրում, հետևաբար առաջարկում ենք քննարկել վերջինիս նշված հիմքով պատասխանատվության ենթարկելու հարցը:

15. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը լրացնել նոր 31.5-րդ գլխով, որի 222.15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցների

հրավաչափության վիճարկման գործերը քննվում են դիմումը վարույթ ընդունելու պահից՝ տասնօրյա ժամկետում: Միաժամանակ, 222.16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ տասը օր հետո:

Հատուկ վարույթի կարգով քննվող գործերի քննության և դատական ակտի ուժի մեջ մտնելու առավել սեղմ ժամկետներ սահմանված են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 269-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարական հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ գործն առաջին ատյանի դատարանը վարույթ ընդունելու հարցը լուծում է մեկ օրվա ընթացքում և դիմումի քննության համար դատական նիստը նշանակում է դիմումը վարույթ ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում: Օրենսգրքի 270-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարական հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանը կայացնում է դիմումը բավարարելու կամ մերժելու մասին վճիռ, որն օրինական ուժի մեջ է մտնում *հրապարակման պահից*:

Մեկ այլ օրինակ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածը վերաբերում է քաղաքացուն բժշկական ոչ հոժարական հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումի քննությանը, որի 1-ին մասի համաձայն՝ այդ տեսակի դիմումը դատարանը քննում է այն ստանալուց հետո հնարավոր սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ներկայացնելու օրվանից հինգ օրվա ընթացքում: Շրջապատի համար վտանգ ներկայացնող այնպիսի հիվանդության դեպքում, որոնց տարածումը կանխելու նպատակով անհրաժեշտ է անմիջապես ձեռնարկել համապատասխան միջոցներ, դիմողի միջնորդությամբ դատարանը գործը քննում և վճիռ է կայացնում անհապաղ, բայց ոչ ուշ, քան դիմումը ներկայացնելու պահից 24 ժամվա ընթացքում: Միաժամանակ, օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ քաղաքացուն բժշկական ոչ հոժարական հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումը բավարարելու մասին դատարանի վճիռը *հրապարակման պահից* մտնում է օրինական ուժի մեջ:

Ակզբունքորեն ընդունելով առանձին տեսակի գործերի քննության և դատական ակտերի ուժի մեջ մտնելու առավել սեղմ ժամկետներ սահմանելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի որդեգրած մոտեցումը՝ կարծում ենք, որ առավել նպատակահարմար կլինի կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցների իրավաչափության վիճարկման գործերի քննության և դատական ակտի ուժի մեջ մտնելու առավել սեղմ ժամկետներ սահմանել՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում որդեգրված մոտեցմանը համապատասխան:

16. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը լրացնել նոր 31.5-րդ գլխով, որի 222.15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն գլխով նախատեսված գործերը վարչական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը վարչական դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը:

Պետք է նկատի ունենալ, որ բողոքարկման առարկա կարող են լինել նաև անձին մեկուսացնելու կամ ինքնամեկուսանալու վերաբերյալ լիազոր մարմնի հրահանգավորումները, որպիսի պայմաններում դիմողն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունենալու անձամբ ներկայանալ դատական նիստերին: Նման դեպքերի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է նման գործերով բանավոր դատաքննությունը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ անցկացնելու հնարավորություն նախատեսել նախագծով, ինչպես, օրինակ՝ նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով:

17. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով անդրադարձ չի կատարվել կարանտին սահմանելու դեպքում կիրառվող միջոցների իրավաչափության վիճարկման գործերը քննող դատարանի կազմի առանձնահատկություններին: Ուշագրավ է, որ ՀՀ

վարչական դատավարության օրենսգրքի՝ հատուկ վարույթի կարգով քննվող գործերի վերաբերյալ կարգավորումների (օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մաս, 203-րդ հոդվածի 1-ին մաս, 208-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ և այլն) ընդհանուր ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նման գործերը քննվում են կոլեգիալ, որպես կանոն 3 կամ 5 դատավորի կազմով:

Ուստի, հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող 31.5-րդ գլուխը լինելու է «Հատուկ վարույթներ» վերտառությամբ 5-րդ բաժնի կազմում՝ անհրաժեշտ է կարանտին սահմանելու դեպքում նախատեսել կիրառվող միջոցների իրավաչափության վիճարկման գործերը դատավորների կոլեգիալ կազմով քննելու պահանջ:

### **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ**